Ծնվել է 1972թ. Հուլիսի 11-ին Ջավաղքում:

1979 թվ. ընտանիքով բնակության է տեղափոխվել է ՀՀ, ք. Աբովյան:

1990 թ. ավարտել է Բալահովտի միջնակարգ դպրոցը:

1991-1996թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի Հայագիտության ֆակուլտետը:

1997- 2005թթ. եղել է ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա, Պատմության ինստիտուտի հայցորդ:

2005 թ. սովորել է Երեւանի Հրաչյա Աճառյան համալսարանի մագիստրատուրայում:

2006 թ. ուսումնառություն է ստացել Հազայի Ինստիտուտում, Սինգապուր: Առաջնորդության զարգացման միջազգային ֆակուլտետում:

2007թ. վերապատրաստում է անցել Բրիջ/Bridge միջազգային կրթական ծրագրի, ժողովրդավարության ռեսուրսների կառավարում և ընտրությունների կազմակերպում դասընթացում:

2015թ. ավարտել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի շարունակական կրթության բաժինը:

2010թ. ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Պատմության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզը: Պատմագիտության թեկնածու է:

Աշխատանքային համապատասխան փորձ. Խորհրդատվական և փորձագիտական աշխատանք է իրականացրել ՀՀ կառավարությունում, կառավարությանն առնթեր պետական կառույցների համապատասխան ծրագրերում, միջազգային և տեղական հասարակական կազմակերպություններում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

2001-2004թթ. աշխատել է Ընտրական համակարգերի միջազգային հաստատություն (ԱՅ ԷՖ Ի ԷՍ/IFES), որպես Քաղաքացիական կրթության ուսուցանող

2004-2006թթ. աշխատել է ՀԵՆԿ /Հասարարական Երկխոսությունների և նախաձեռնությունների կենտրոն ՀԿ-ում, որպես «Համայնքային զարգացման» ծրագրի համակարգող,

2005-2012 թթ. Ազգային առաջնորդության ինստիտուտ ՀԿ-ում եղել է Ուսումնամեթոդական և կրթական ծրագրերի ղեկավար:

2001- 2004, 2006-2015, 2018 թթ. եղել է Ընտրական համակարգերի միջազգային հաստատություն (ԱՅ ԷՖ Ի ԷՍ/IFES) Դասընթացավար/ համակարգող

2010- 2013 թթ. եղել է՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի, նորագույն պատմության բաժնում գիտաշխատող:

2013-2015 թթ. աշխատել է Վորլդ Վիժն միջազգային կազմակերպությունում, որպես Միջմշակութային համագործակցության ծրագրի ղեկավար:

2015-2019 թթ. աշխատել է Վրաստանի հայկական պատմամշակութային ժառանգության ուսումնասիրության կենտրոնի ղեկավար:

2018-2019 թթ. եղել է՝ ՀՀ մշակույթի Նախարարի խորհրդական:

2019 թ. փորձագիտական աշխատանք է իրականացրել՝ ՄԱԿ (UNDP) Հայաստանյան գրասենյակի՝ Հայաստանում ընտրությունների աջակցության նախագծում:

2019-2022թթ. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում, որպես դասախոս:

2019-2022թթ. աշխատել է Ընտրական համակարգերի միջազգային հաստատությունում (ԱՅ ԷՖ Ի ԷՍ/IFES) Հայաստանյան գրասենյակում՝ «Մատչելիության և Քաղաքական Ներառում» ծրագրի պատասխանատու**:**

2022 թ. հոկտեմբերի 7-ին ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ ընտրվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ:

Ընտրական համակարգերում ունի երկարամյա աշխատանքային փորձ:

Ծրագրի շրջանակներում ներգրավված է եղել Ընտրական օրենսգրքի փոփոխությունների մշակման, վերանայման և առաջարկությունների ներկայացման աշխատանքներում, մասնավորապես նպաստելով՝ ընտրական բարեփոխումներում ներառական բաղադրիչի քննարկումներին և դրա կիրառելիությանն ուղղված միջոցների ներդրման աշխատանքներին:

Անմիջական մասնակցություն է ունեցել Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի (ԿԸՀ) և Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (ԱՅ ԷՖ Ի ԷՍ/IFES) կողմից իրականացված՝ Ընտրատարածքային Ընտրական հանձնաժողովների և Տեղամասային Ընտրական հանձնաժողովների անդամների ուսուցման, վերապատրաստման, նյութերի և մեթոդաբանության մշակմանը և դրանցում՝ ներառական բաղադրիչի ներդրմանն ու դրան նպաստող գործիքակազմի մշակմանը:

Մեկ տասնյակից ավել՝ գիտական եւ հետազոտական հոդվածների, մենագրությունների եւ գիտական աշխատությունների հեղինակ և համահեղինակ է:

Տիրապետում է՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներին: